ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի (Բացման նիստի արձանագրություն)

ք. Երևան *22.11.2019թ.*
Ժամը՝ 16:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Անահիտ Մալխասյան*
Անդամներ՝ *Հայկ Խուրշուդյան*

Դավիթ Խաչատրյան

Լևոն Մուրադյան

Մովսես Ասրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Հասմիկ Ղազարյան*

Օրակարգ՝

1. Տեղեկություն՝ ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1 Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության 2019 թվականի կարիքների բավարարման համար՝ **գրասենյակային ապրանքների** ձեռքբերման նպատակով **«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-19/15»** ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հայտը բացվել է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության շենքում, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2019 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը 12:00-ին:

1.2. http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	**Մասնակցի անվանումը**	**Էլ. Հասցե**
1	«ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ	Shtamp-nmr@mail.ru
2	«Միկրորինգ» ՍՊԸ	microring@arminco.com

2. Տվյալներ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

2.1 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով հայտ ներկայացրած մասնակցի կողմից փաստաթղթերը կցված չէին, իսկ 4-րդ չափաբաժնով հայտ ներկայացված «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ»

ՍՊԸ-ի հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկ, ինքնարժեքի հաշվարկ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից, իսկ «Միկրորինգ» ՍՊԸ-ի փաստաթղթերը կցված չէին:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1. «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

5. Տվյալներ նախահաշվային գնի մասին և յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝

	ՀՀ պետ. բյուջեով նախատեսված գինը	Չ/Բ	Առաջարկված գինը		
			Ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուրը
«ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ	16000	4	16000	-	16000

6. Տվյալներ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

6.1 Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների՝ հիմք ընդունելով ներկայացրած ամենացածր գնային առաջարկը՝ հանձնաժողովը որոշեց՝

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-2019/15» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի 4-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից համարել **«ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ» ՍՊԸ**-ին, իսկ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններին հայտ ներկայացրած մասնակցի փաստաթղթերը armeps.am համակարգում կցված չէին երևում, ինչը հնարավոր է ծրագրային խնդրի արդյունք լիներ, հետևաբար դիմել ենք ֆինանսների նախարարություն՝ ծրագրային սպասարկում իրականացնող կազմակերպությունից պարզելու թե արդյո՞ք խնդիրը հայտ ներկայացնող մասնակցի կողմից է, թե ծրագրային անսարքության արդյունք է:

6.2 Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ՝ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի

ավարտին աջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով /Lena_Najaryan@taxservice.am (հեռ. 060-54-49-71), karine_sargsyan@taxservice.am, էլեկտրոնային փոստի հասցեներին /ՀՀ կառավարությանն առընթեր պետական կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

6.4 4- րդ չափաբաժնով հայտ ներկայացրած և առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել և պահանջել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

7. **Տեղեկություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ**

Հայտի փոփոխություններ, հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ

8.1 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ե) պարբերության համապատասխան՝ հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից պատասխան ստանալուց հետո:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- *Ա. Մալխասյան*

Անդամներ՝ ---------- *Հ. Խուրշուդյան*

---------- *Դ. Խաչատրյան*

---------- *Լ. Մուրադյան*

---------- *Մ. Ասրյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Հ. Ղազարյան